

Բնապահպանական մոնիթորինգի հաշվետվություն

Կիսամյակային հաշվետվություն

Հունվար-հունիս, 2017թ.

ARM: Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագիր, Տրանշ 1

Ծրագրի համար՝ 42417-023

Վարկի համար՝ L2752-ARM

Պատրաստված՝ 2017թ. հունիս

Պատրաստված է Երևանի քաղաքապետարանի կողմից
«Երևանի կառուցապատման ներդրումային ԾԻԳ» ՀՈԱԿ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱԶԲ	Ասիական զարգացման բանկ
ԱԵԱ	Ազդեցության ենթարկված անձ
ՄՆՇԿԽ	Մանրամասն նախագծման և շինարարության վերահսկողության խորհրդատու
ՇՄԱԳ	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում
ԲԿՊ	Բնապահպանական կառավարման պլան
ԲՄՀ	Բնապահպանական մոնիթորինգի հաշվետվություն
ԲՄ	բնապահպանության մասնագետ
ԲԼՍ	Բողոքների լուծման մեխանիզմ
ՇՄՆՈՒ	Շրջակա միջավայրի նախնական ուսումնասիրություն
ԲՆ	Բնապահպանության նախարարություն
ԲՓ	Բնապահպանական փորձաքննություն
ԾԻԳ	Ծրագրի իրականացման գրասենյակ
ԱԲԳ	Արագ բնապահպանական գնահատում
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ԻՄՆ	Ինժեների մշտական ներկայացուցիչ
ՏԲԿՊ	Տեղամասային բնապահպանական կառավարման պլան
ԱԲՀ (2009)	Անվտանգության քաղաքականության հայտագիր (2009)
ԲԿԶՆԾ	Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագիր
ԵՔ	Երևանի քաղաքապետարան

Բովանդակություն

I. Ներածություն.....	4
A. Ծրագրի նկարագրություն.....	4
B. Ծրագրի առաջընթաց.....	5
C. Ծրագրի ինստիտուցիոնալ կառավարում.....	5
II. Բնապահպանական կառավարում.....	6
A. Բնապահպանական անվտանգության երաշխիքների ծրագիր.....	6
B. ԱԶԲ առաքելություն.....	6
a. Բողոքների լուծման մեխանիզմ և հանրային խորհրդատվություն.....	6
b. Հանդիպումներ և Հաղորդակցություն.....	8
c. Իրազեկման բարձրացում և Բնապահպանական վերապատրաստում.....	8
III. Բնապահպանական մոնիթորինգ.....	8
A. Բնապահպանական մոնիթորինգի ծրագիր.....	8
B. Անհամապատասխանության ծանուցումներ.....	9
C. Ուղղիչ գործողությունների ծրագրեր.....	9
IV. Եզրակացություններ.....	9
V. Հետագա ծրագրեր.....	10

I. Ներածություն

1. Բնապահպանական մոնիթորինգի կիսամյակային այս հաշվետվությունն ընդգրկում է 2017թ. հունվար-հունիս ընկած ժամանակահատվածը: Այս հաշվետվությունը պատրաստվել է ԾԻԳ-ի ԲՄ-ի կողմից:


A. Ծրագրի նկարագրություն

2. ՀՀ կառավարությունը 2011 թվականի մայիսի 19-ին փոխառություն է ստացել ԱԶԲ-ից ԲԿՉՆԾ, Տրանշ 1-ը ֆինանսավորելու համար: Ծրագրի հիմնական նպատակն է արագընթաց ճանապարհի չափանիշներով նոր մայրուղու կառուցումը, որը գոյություն ունեցող Շիրակ փողոցը և Արշակունյաց պողոտան կկապի Արտաշատի խճուղուն:

3. Ծրագիրը բաղկացած է հետևյալ հիմնական բաղադրիչներից՝

- (i) 6 երթևեկելի գոտիների բաժանված նոր ճանապարհի կառուցում,
- (ii) Շիրակի փողոցում շրջանաձև երթևեկությամբ ճանապարհի կառուցում և
- (iii) ճանապարհային հանգույցների կառուցում:

4. Տրանշ 1-ի շրջանակներում նախատեսվում է կառուցել երկու ստորգետնյա տրանսպորտային հանգույց Արշակունյաց-Գարեգին Նժդեհ (Հայրենիք ուղեանց) և Արշակունյաց-Բագրատունյաց (Բանվորի ուղեանց) խաչմերուկներում:



Պատկեր 1: Տրանս 1-ի տեղադիրքի քարտեզ

B. Ծրագրի առաջընթաց

5. Տրանս 1-ի (Մրցույթ 1 և Մրցույթ 2) շինարարությունն արդեն ավարտված է: Մրցույթ 1-ը և Մրցույթ 2-ը թերությունների վերացման ժամանակահատվածի մոնիթորինգի ընթացքում են:

6. Երևանի քաղաքապետարանին կից քաղաքաշինության խորհուրդն արդեն որոշում է կայացրել Տրանս 1-ի շրջանակներում Արշակունյաց-Գարեգին Նժդեհ (Հայրենիք ուղեանց) և Արշակունյաց-Բագրատունյաց (Բանվորի ուղեանց) խաչմերուկներում տրանսպորտային հանգույցների մասով:

C. Ծրագրի ինստիտուցիոնալ կառավարում

7. ԾԻԳ-ի ԲՄ-ի գլխավոր առաջադրանքն է իրականացնել ողջ բնապահպանական կառավարումը՝ ապահովելով Ծրագրի իրականացման լիարժեք համապատասխանությունը ՀՀ օրենսդրությանը և ԱՁԲ-ի ԱԶՀ-ին (2009): ԲՄ-ը հանդիսանում է կապող օղակ ՄՆՇՎԽ-ի անվտանգության թիմի, ԵԶ-ի՝ իրականացնող գործակալության, ՀՀ ԲՆ և ՀՀ մշակույթի նախարարության, ծրագրի արդյունքում ազդեցության ենթարկված անձանց ու ԱՁԲ-ի միջև և զարգացնում ու պահպանում է անմիջական հարաբերությունները պետական մարմինների հետ, ՄՆՇՎԽ-ի ԲՄ-ի օգնությամբ կազմակերպում և

իրականացնում է հանրային խորհրդատվություններ և այլն: ԾԻԳ-ի ԲՄ Ռուզաննա Ոսկանյանը ղեկավարում է շինհրապարակի բոլոր գործողությունները, որոնք առնչվում են բնապահպանական խնդիրներին, իսկ ԾԻԳ-ի հողի օտարման և տարաբնակեցման մասնագետ Սիրաք Գյուլբուդադյանը ղեկավարում է տարաբնակեցման և սոցիալական ոլորտների բոլոր խնդիրները:

II. Բնապահպանական կառավարում

A. Բնապահպանական անվտանգության երաշխիքների ծրագիր

8. Բնապահպանական անվտանգության երաշխիքների ծրագրի իրականացումը մեկնարկել է 2013 թվականի հունվարին և եղել է ընթացքի մեջ հաշվետու ժամանակահատվածի ընթացքում:

9. ԱԶԲ-ի կողմից 2017 թվականի հունիսի 06-ին ներկայացված դիտողությունների հիման վրա ԾԻԳ-ը խորհրդատուների հետ միասին վերանայում է Բանվորի ուղեանցի Արագ բնապահպանական գնահատման (ԱԲԳ) ստուգաթերթը: Վերանայված ԱԲԳ ստուգաթերթը ԱԶԲ-ին կներկայացվի հաջորդ հաշվետու ժամանակահատվածում:

B. ԱԶԲ առաքելություն

10. Հաշվետու ժամանակահատվածում չի եղել:

a. Բողոքների լուծման մեխանիզմ և հանրային խորհրդատվություն

11. ԱԵԱ-նց արձագանքների, մտահոգությունների և բողոքների համար Ծրագրի ընթացքում պետք է վարվի ԲԼՄ՝ ԱԶԲ-ի ուղեցույցների և քաղաքականությունների խնդիրների լուծման գործառույթի հիման վրա: ԲԼՄ-ի նպատակն է աջակցել տուժած անձանց ներկայացնել իրենց բողոքները և նկարագրել նրանց դժգոհությունները ժամանակին և արդյունավետորեն լուծելու համար մշակված մեխանիզմ: Պոտենցիալ ներգրավված կողմերն են՝ բողոք ներկայացնողները, Կապալառուն, ՄՆՇՎԽ-

և, ԾԻԳ-ը, ՊԳ-ը, ՀԿ-ները և դատարանները: ԲԼՄ-ի գործարկման մանրամասները կարելի է գտնել Մրցույթ 2-ի ճանապարհահատվածների ՇՄԱԳ-ում¹:

12. Հաշվետու ժամանակահատվածում ճաքերին վերաբերող մրցույթ 2-ի (աղյուսակ 1) բողոքները դիտարկվել են Կապալառուի, Ինժեների վերահսկող թիմի սոցիալական մասնագետների կողմից, որոնց աշխատանքը համակարգում է ԾԻԳ-ի Հողի օտարման և տարաբնակեցման մասնագետ Սիրաք Գյուլբուդադյանը:

Աղյուսակ 1 – Հաշվետու ժամանակահատվածում ներկայացված բողոքների կարգավիճակ

	ԱԵԱ	Հասցե	Բողոք	ԾԻԳ-ի արձագանք/գործողություններ
1	Մարիցա Հաջիյան Արտյոմ Սարգսյան	Նորագավիթ 1-ին փ, 1-ին փակ, տ. 4/1	Ճաքերի հետ կապված խնդիր, գույքի ամբողջական օտարման պահանջ	Մերժված (ԱԵԱ-ը դիմել է դատարան: Դատական նիստը նշանակվել է 06.07.2017թ.):
2	Սերգեյ Ղևոնդյան	Նորագավիթ 1-ին փ, 1-ին փակ, տ. 13/1	Ճաքերի հետ կապված խնդիր, ցանկապատի վերակառուցման պահանջ	Ճաքերի համար փոխհատուցումը մերժվել է:
3	Նորայր Մկրտչյան	Արշակունյաց 286/21	Ճաքերի և խոնավության հետ կապված խնդիր, գույքի ամբողջական օտարման պահանջ	Մերժված (ԾԻԳ-ն առաջարկել է վերանորոգել պատը, սակայն ԱԵԱ-ը մերժել է և պահանջում է գույքի ամբողջական օտարում: ԱԵԱ-ը դիմել է դատարան: Դատական գործը դեռևս լուծված չէ):
4	Վանիկ Պապոյան	Արտաշատի խճուղի 26/1	Ճաքերի հետ կապված խնդիր, փոխհատուցման պահանջ	Մերժված
5	Սամվել Գյուլնազարյան	Նորագավիթ 1-ին փող, տ. 25	Պատի վերանորոգման պահանջ	ԱԵԱ-ի պահանջը մերժվել է ԾԻԳ-ի կողմից, սակայն ԱԶԲ-ը պահանջել է Ինժեների լրացուցիչ ուսումնասիրություն:
6	Սիրեկան Խաչատրյան	Արտաշատի խճուղի 6	Ճաքերի հետ կապված խնդիր, փոխհատուցման պահանջ	ԱԵԱ-ի պահանջը մերժվել է ԾԻԳ-ի կողմից, սակայն ԱԶԲ-ը պահանջել է Ինժեների լրացուցիչ ուսումնասիրություն:

¹ Մրցույթ 2-ի ՇՄԱԳ/ԲԿՊ Գ.2. Բողոքների լուծման մեխանիզմ էջ 43-ը 57-ից:

7	Խմբակային բողոք (14 ԱԵԱ)	Արտաշատի խճուղի	Ճաքերի հետ կապված խնդիր, փոխհատուցման պահանջ	Մերժված
8	Խմբակային բողոք (8 ԱԵԱ)	Արշակունյաց 296	Ճաքերի հետ կապված խնդիր, պատշգամբների ամրացման համար փոխհատուցման պահանջ	Պատրաստվել է Անհապաղ Ամրապնդման պլան և Ներկայացվել ԱԶԲ
9	Սամվել Գևորգյան	Նորագավիթ 1-ին փող., 2-րդ փակ, տ. 1/2	Ճաքերի հետ կապված խնդիր, փոխհատուցման պահանջ	Մերժված (ԱԵԱ-ը դիմել է դատարան: Դատական գործը դեռևս լուծված չէ:)

b. Հանդիպումներ և Հաղորդակցություն

13. Հաշվետու ժամանակահատվածում ԱԵԱ-ն, ԾԻԳ-ի և Ինժեների միջև պարբերաբեր տեղի են ունեցել քննարկումներ ճաքերի ուսումնասիրման խնդրի վերաբերյալ, ինչպես նաև ճաքերի վերաբերյալ հարցերը քննարկվել են ԾԻԳ-ի և ԱԶԲ-ի հետ:

c. Իրազեկման բարձրացում և բնապահպանական վերապատրաստում

14. Հաշվետու ժամանակահատվածում չի եղել:

III. Բնապահպանական մոնիթորինգ

A. Բնապահպանական մոնիթորինգի ծրագիր

15. Հաշվետու ժամանակահատվածում Մրցույթ 1-ը և 2-ը թերությունների վերացման ժամանակահատվածի ստուգման փուլում էին: Հաշվետու ժամանակահատվածում բավականաչափ անձրևոտ եղանակ էր, որի ընթացքում չի ծագել ջրահեռացման հետ կապված որևէ խնդիր: Ծառերի մեծ մասը տնկվել է Արտաշատի խճ.՝ ստորև ներկայացված քարտեզում նշված հատվածում:



Պատկեր 2: Մրցույթ 2-ի շրջանակներում տնկված ծառերի տեղադիրքի քարտեզ

B. Անհամապատասխանության ծանուցումներ

16. Հաշվետու ժամանակահատվածում չի եղել:

C. Ուղղիչ գործողությունների ծրագրեր

17. Հաշվետու ժամանակահատվածում չի եղել :

IV. Եզրակացություններ

18. Հաշվետու ժամանակահատվածում չի եղել:

V. Հետագա ծրագրեր

Ձ/Ձ	Գործողություն	Ժամանակահատված	Պատասխանատու
1	Բանվորի ուղեանցի ԱԲԳ ստուգաթերթի վերանայված տարբերակի ներկայացում	Հաջորդ հաշվետու ժամանակահատվածում՝ 2017թ.	ԾԻԳ, ՄՆՇՎԽ
2	Հայրենիքի ուղեանցի ԱԲԳ ստուգաթերթի վերանայված տարբերակի ներկայացում	Հաջորդ հաշվետու ժամանակահատվածում՝ 2017թ.	ԾԻԳ, ՄՆՇՎԽ
3	Հետշինարարական աուդիտ	Հաջորդ հաշվետու ժամանակահատվածում՝ 2017թ.	ԾԻԳ, ՄՆՇՎԽ
4	Բնապահպանական երաշխիքների զեկուցում	Եռամսյակային, կիսամյակային	ԾԻԳ, ՄՆՇՎԽ